

ուսուցիչ կրօնագիտութեան ժառ. վարժ.ի (1851 — 1865). կը հրաժարի միաբանութենէն 1865ին:

**ՂԵՒՈՆԴ ՎՐԴ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ, ԴԱՄԱՍԿԱՅԻ.**—Մբ. Ծ. 1852 ին, աչկ. ժառ. վարժ.ի. Զո. 1877 ին, Տեսուչ ժառանգաւորաց վարժ.ի. 1878 ին ելլամտից տեսուչ և ժողովական ու երկար ժամանակ կը մնայ իր կրկնակ պաշտօններուն մէջ: Իր հսկողութեամբ կը կառուցուին Յարութիւն պատրիարքի կալուածքը (այժմ վեհաշէն) և Աղիւսի հիւրանոցը վալնիկ դրամովը և յօգուտ նոյն հաստատութեան: Այս շինութիւններուն եւ իր ելլատարան բոլոր գործառնութիւններուն համար ամբաստանուելով՝ երբ հաշուետուութենէ կը խուսափի, Միաբանութեան կողմէն բողոքներ տեղի կ'ունենան, քննիչներ կուգան եւ քննութիւններ կը կատարուին թէ՛ Ս. Յակոբի մէջ և թէ՛ Պոլիս. ուր 1906 ին կը հրաւիրուի Ղեւոնդ վրդ. նոյն հաշուական խնդիրներու պատճառաւ եւ անոնց մասին բացատրութիւններ տալու համար:

Ազգ. Կեդր. վարչութիւնը մասնաւոր Յանձնաժողովներու ձեռքով Ղեւոնդ վրդ.ի հաշիւներու մանրակրկիտ քննութիւնը կատարելէ վերջ՝ կը վճռէ թէ 11267 օսմ. ոսկի Ս. Յակոբի վանքին պարտական է ան. բայց յիշեալը առարկութիւններով չընդունիր այդ վճիռը ու կը հրատարակէ տետրակ մը Ալլևարի մը Երուսաղեմի հաշուեկնիչ Ս. եւ վերջին Յանձնաժողովոց եւ ակունց տեղեկագրերուն եզրակացութեանց վրայ խորագրով: Ազգ. ժողովը Ընդհ. Պատերազմի հետեանքով կ'ատլպուի առկախել այս հաշուական խնդիրները եւ Ղեւոնդ վրդ. կը մեկուսանայ Դամասկոս (1914-1916): Յիշեալը Սահակ կթղ. Պարք.ի հրաւէրով դարձեալ կ'ստանձէ նախկին պաշտօնը 1916 ին, եւ կը վարէ մինչև 1918 թուականը: Ան կը դադրի պաշտօն վարելէ Հոգատար պետութեան կողմէ կազմուած վարչ. ժողովի որոշումով: 1922 ին կը վախճանի Երուսաղէմի մէջ առանց հաշուական խնդիրներուն վախճան մը տալու: Տիրացած հարստութիւններէն ու գետիններէն Ս. Յակոբի վանքը չօգտուիր. վասն զի մահուանէ առաջ ուրիշներու կը փոխանցէ զանոնք. միայն վանքին կը մնան այն եօթը մթերանոցները որոնք իր ծախքովը շինուած էին վանքապատական դեանին վրայ. եւ ըստ պայմանագրութեան՝ յետ մահու Ս. Յակոբի սեպհականութիւն կը դառնան: